ՆՈՐ-ԴԱՐ

№ 165 ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ Շաբաթ 13 Նոյեմբերի 1884 Շաբաթ 13 Նոյեմբերի ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ № 165

Տարեկան 10 րուբլ. վեց ամիս՝ 6 րուբլ. երեք ամիս՝ 3 ր. 50 կ. Համարը՝ 5 կոպէկ: Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ" կամ Tiflis, Rédaction „Nor-Dar".

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով: Յայտարարութեան մէկ տողը 2 կ. ընկերների համար՝ կրճատ։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ.

«Նոր-Դար»-ին բաժանորդ են գրվում Նոյեմբերի 1-ից մինչև 1885 յունվարի 1-ը, և բաժանորդագինը վճարում են 3 րուբլի 50 կոպ. հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ":

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Մեր գործերի մէջ եսը:
Քրոնիկոն.—Լուրեր: — Ականջը ուսումնարանական առողջապահութեան վերաբերմամբ:
Թղթակցութիւններ. — Ջալալ-Օղլուց, Ալէքսանդրապօլից, Նուխուց և Սալմաստից (արևելյան Պարսկ.):
Քաղաքական.—Լուրեր:
Խառն լուրեր:
Հեռագիրներ:
Յայտարարութիւններ:

Թիֆլիս, 12 Նոյեմբերի 1884

ՄԵՐ ԳՈՐԾԵՐԻ ՄԷՋ ԵՍԸ.

Շատ անգամ առիթ ենք ունեցել խօսելու այն ցաւալի երևոյթի վերայ, որ մեր բոլոր գործերը, ընկերական լինէին դրանք, հասարակական թէ մի ուրիշ-ական, բոլորին առաջնորդողը, կամ լաւ մըղողը—եսերն են:

Այդ հանգամանքը արդէն բաւական էր մեր ժողովուրդը և նրա կեանքը ուսումնասիրողի համար, տեսնելու, որ մեր ժողովուրդը իւր այսպէս անուանեալ ինտելիգենցիայով դեռ շատ հեռու չէ գնացել կիսավայրենի դրութիւնից:

Թող չ'նեղանան մեզանից, մարդավարի ճանապարհով ապացոյցներ պահանջեն, մենք կը տանք, նրանք անհերքելի են:

Քանի մարդիկ հեռանում են վայրենի կեանքից, քանի զարգանում են, այնքան նրանց մէջ զարթնում է խմբովին, միասին ապրելու գաղափարի շահաւէտութիւնը:

Մարդիկ խմբուած կեանք վարելով և դրանից օգտուելով, աւելի զարգանում են թէ մտաւորապէս, թէ հոգեպէս և թէ ֆիզիքապէս: Վարելով հետզհետէ խմբական, համայնական, ժողովրդական, ազգային կեանք, աւելի և աւելի քաղաքակրթվում և աւելի բարձր կուլտուրայի են հասնում: Այդպիսով աւելի զարգանում է մարդիկների մէջ ընկերական, հասարակական կեանքը և դրանից ստանալիք ահագին օգուտների գիտակցութիւնը: Եւ մենք այդ ընկերական, հասարակական կեանքի աւելի բարձր զարգացումը իւր նախանձելի հետևանքներով հանդիպում ենք աւելի բարձր կուլտուրայի տիրացած ազգութիւնների մէջ: Հասկանալի է, որ մարդկութիւնը երկրագնդիս վերայ իւր իդէալներին, իւր վսեմ գաղափարներին, նպատակներին, նախնականութիւնից սահմանեալ կատարելագործութեան կարելոյն չափ կարող է հասնել միմիայն ընկերական, հասարակական կեանքում:

Արդ, ինչպէս գիտենք, վայրենի, առանձնացած կեանքից մինչև ընկերական, հասարակական կեանքին հասնելը ահագին ճանապարհ կայ կտրելու:

Վայրենի կեանքում ամեն ինչ վճռողը—եսն է, իսկ հասարակական, ընկերական կեանքում—ընդհանուրի, հասարակաց շահերը: Պարզ է, որ վայրենիութիւնից ընկերական կեանքի փոխուելու և այդ ընկերական, հասարակական կեանքը կարելի անելու և զարգացնելու համար, հարկաւոր է միմեանց հետ կապող շահերի կէտեր որոնել, որոնք կապում լինին ամենքին միասին: Իսկ այդ վերջինը կարելի անելու համար անհրաժեշտ է, որ ընկերական-հասարակական կեանքում, —«եսը» իւր առանձին ձգտումներովը չափաւորուի, ընդհանուրի շահերին յարմարուի, որի մի այսինչ-երրորդ մասն դարձեալ իրեն համար է անշուշտ:

Մենք տեսնում ենք ուրեմն, որ «ես»-ի սանձահարելը ընկերական-հասարակական կեանքի conditio sine quo-ն է, առանց որի նա կարող չէ գոյութիւն ունենալ և առաջ գնալ:

Հասարակական կեանքի զարգացման իբրև ապացոյց մի ժողովրդի մէջ զանազան նպատակներով գոյութիւն ստացող և գործող ընկերութիւններն են:

Նայենք մենք մեր մէջը և տեսնենք թէ ինչ դրութեան մէջն են մեր ընկերութիւնները:

Հարկաւոր չէ շատ հեռու գնալ և հարկաւոր էլ չէ շատ բան ասել:

Մենք Թիֆլիսումը ունինք՝ Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութիւն, Հայուհեաց բարեգործական ընկերութեան, Գրքերի հրատարակութեան ընկերութիւն, մի նոր կազմուող նոր «Ակումբ» անունով ընկերութիւն:

Հայուհեաց ընկերութեան մասին քիչ բան գիտենք, բայց ինչպէս երևում է, կանայք իրենց գործը աւելի լաւ են առաջ տանում քան թէ մեր տղամարդիկը, և երևում է, որ եսը նրանց մէջ այնքան սարսափելի չէ: Իսկ միւս ընկերութիւնները...

Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովին հաւաքվում են ընդհանուր ժողովի նախագահը, խորհրդի փոխնախագահը, քարտուղարները և մի երկու մարդ, միմեանց երեսին նայում են և գնում: Իսկ այս ընկերութիւնը ունի գեղեցիկ, բարի նպատակներ և անդամակցութեան վճարը միմիայն—5 րուբլի է: Մի հարցնէք թէ այսօր այդ ընկերութիւնը քանի անդամ ունի:

Գրքերի հրատարակութեան ընկերութիւնը, որը աւելի հին է, բայց դրա գոյութեան և գործունէութեան մասին գրեթէ ոչ ոք չը գիտէ, միայն նրանք, որոնք քամբաղդութիւն են ունեցել մի որև է ժամանակ դրան մի որև է աշխատութիւն յանձնելու.... բայց այդ ընկերութեան նպատակն էլ իւր սահմանին մէջ գեղեցիկ է, օգտաւէտ է: Լռեցէք և ամենևին մի հարցնէք թէ այդ ընկերութիւնը քանի անդամ ունի:

Դրամատիկական ակումբի ընկերութիւնը, ճշմարիտ որ գեղեցիկ նպատակ ունի. լաւ թատրոն, լաւ դրամատիկական խումբ ունենալը, պահելը, տաղանդներ պահպանելը, գրականութեան, գեղեցիկ գրականութեան զարկ տալը—դրանից էլ գեղեցիկ նպատակ:

Գուցէ մտածէին, որ այդ մասին մամուլի մէջ տարիներով գրուել, մտքերը պատրաստուել են: Գուցէ մտածէին, որ այդ տեսակ ընկերութեան մասնակից են կամ հրաւիրուած են մասնակցելու մեր լեզուով, մեր գրականութիւնով հետաքրքրուող անձինքը, (թատրոնից, գեղեցիկ արհեստներից քիչ շատ հասկացողները, մամուլի ներկայացուցիչները, որոնք խիստ շատ չեն կամ եթէ ոչ ամենքը, գոնէ մի մասը... Ո՛չ, այդպէս բան չ'կայ. միմիայն տասներեք կամ տասն և հինգ հոգի հաւաքվում են տասներկու անդամներ երեք հոգաբարձուներ ընտրում այն երեխայի համար, որ դեռ ծնուած չէ:

Այդ ընկերութիւնից դեռ խօ ոչինչ յայտնի չէ, և ահա դուրս են գալիս մարդիկ և երեք տարի անլուռ մնացած լուացքը հրապարակին վերայ լուանում են...

Մեր ընկերութիւնների ողբալի դրութեան պատճառը —եսերն են:

Որքան էլ որ փոքր են այդ եսերն, բայց այդ փոքրութիւնն է նրանց յաջողութեան ամենագլխաւոր պայմանը:

Փոքրիկ եսերը կարող են միշտ յաջողութիւն ունենալ մի կեանքում, որ նեղ է, սառը է և անձուկ է. մի ժողովրդի մէջ, որ դեռ շատ տհաս է ընկերական, հասարակական կեանքի համար և ընդհանուրի շահերի առաջ անտարբեր է. մի ժողովրդի մէջ, որ բարձր մըտքերի և նպատակների համար հոգի չունի, այդտեղ իւրաքանչիւր անհատի գործունէութեան մէջ գըլխաւոր և միակ դրդիչը-եսն է:

Ս. Ս.

ՔՐՈՆԻԿՈՆ

ԳԱՆՁԱԿԻՑ. Ամենին յայտնի է, որ այժմեան ժամանակում արդարացի պահանջվում է մատաղահաս սերնդի կրօնական—բարոյական կրթութիւն և դաստիարակութիւն, որն ստանում է ամեն մի անհատ ուսանելով կրօնագիտութիւն ըստ իւր դաւանութեան: Բայց դժբաղդաբար կարող չենք հասկանալ և բացատրել այն լուրը, եթէ միայն ճշմարիտ է, որն հաստատ լսվում է այստեղ, թէ կլասիքական գիմնազիայի նորեկ դիրեկտորն յայտնել է Հայոց և մահմեդական կրօնուսոյցներին, որ կրօնի դասատուութիւնը Հայ և Թուրք աշակերտների համար պարտաւոր չէ, այլ կամաւոր: Ինչպէս լսում ենք, կրօնի դասատուութիւնը, որի դասերի թիւը առանց այդ էլ շատ սակաւ էր, արդէն դադարեցրած է հինգերորդ դասատանից:

„Кавказъ" լրագրի ասելով՝ Նոյեմբերի 8-ին, ցերեկուայ 11 ժ. 35 ր. Սանգաչալի երկաթուղու կայարանում, (3-րդը Բաքուից սկսած) Ճանապարհորդների վագոններից 12 սաժէն հեռու գտնուող շոգեկառքը պայթեցաւ, երբ նա տենդերի հետ միասին գտնում էր գէպի գնացքը: Շոգեկառքը և տենդերը միմեանցից անջատուեցան, և թաւալով օդի մէջ՝ ընկան գետնի վերայ:

Մեքենայավարը սպանուած է, նրա օգնականը ծանր վէրքեր է ստացել, վագոններին եղ քաղի պարանոցը գլխին այրել է: Պայթելու պատճառը առայժմս անյայտ է:

ՇԱՄԱԽՈՒՑ մեզ հեռագրում են, որ Թադէոս սրբազանը Գիւրջիվան գիւղում երկու հոգու քահանայ է ձեռնադրել:

Չենք կարող մեր գոհունակութիւնը չ'յայտնել դրա առթիւ: Յայտնի է, որ ս. Սինոդի կարգադրութիւնով այժմս խըստիւ արգելուած է քահանայ ձեռնադրելը և այն խստութիւնը, որ այժմս գործ է դրվում քահանայացուների ընտրութեան մէջ, և 'ի նկատի առնելով ամեն կողմից զրած այդ մասին պահանջները, ապացոյց են, որ այդ երկու նորընծայ քահանաները ստացած Ներսիսեան դպրոցից կամ ճեմարանից, կրօնի և եկեղեցական արարողութիւնների մէջ հմուտ և ամենայն կերպ արժանաւոր ճանաչուելով, արժանացել են այդ սուրբ կոչմանը, իբրև արժանի հովիւ հովուելու հօտը: Ուրեմն Թադէոս սրբազանին ենք պարտական, որ բաւականին ժամանակից յետոյ մեր եկեղեցին երկու արժանաւոր սպասաւորներով հարստանում է: Աւելի պէտք է մեզ համար թանկ լինի այդ, քանի որ մեր եկեղեցին, մանաւանդ Շամախու կողմերում, արժանաւոր քիչ շատ իւր գործին հմուտ քահանաների խիստ կարօտ է:

ՇԱՄԱԽՈՒ գաւառի ուսուցիչ Յ. Ճուղուրեանը խմբագրութեանս ուղղած մի նամակում կամենում է յայտնի անել շամախեցիներին, որ այնտեղից „Նոր-Դար"-ին լուրեր հաղորդողը ինքը չէ: Մի անպէտք աւելորդութիւն, որ մտել է գործել մեր մամուլի մէջ: Անպէտք ենք ասում, որովհետև միևնոյնը կարող էր նա և բերանացի ասել իրեն շրջապատող հասարակութեան:

Մի ուրիշ պարոն Զ. Շամախու մեր լրատուից գանգատաւոր է, որ նա 35 վերջօ գինու մասին հաղորդելիս՝ տեղւոյն եկեղեցու խալիչաների 186 րուբլու հաշուի մասին ոչինչ չէ ասում:

Խմբագրութեան ուղղած նամակները, յօդուածները, բացի այն, որ պէտք է կարելոյն չափ պարզ և որոշ գըրուած լինին, պահանջվում է և գրողների իսկական անուն և ազգանունը:

Առաջիկայ համարից կը սկսենք հրատարակել առժամանակ դադարեցրած առևտրական տեղեկատու, թէպէտև բացի խմբագրական, այլ և ուրիշ շատ տեսակ դժուարութիւնների յաղթելով ենք միայն կարողանում այդ բաժինը լոյս հանել: Ուստի բազմաթիւ կողմերից այդ մասին յայտնած ցանկութեանը բաւականութիւն տալով, յոյս ունինք, որ ընդհատման համար ներողամիտ կը լինեն մեր ընթերցողները:

ԱԿԱՆՋԸ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ.

Ներքուստ սոյն վերնագրով յօդուածը հրատարակած է Բեռլինի դօկտոր Գ. Լուդվիգ Լուէն Լայպցիգի „Von Nah und Fern" պատկերազարդ ամսագրում, որից մենք թարգմանաբար առնելով ուղարկում ենք ձեզ 'ի գիտութիւն մեր Հայ մանկավարժ ուսուցիչներին:

Այս յօդուածը, ինչպէս բովանդակութիւնից պիտի տեսնենք, հիմնուած է բազմաթիւ գործնական փորձերի և հետազօտութիւնների վերայ, որով և հետզհետէ հաստատութիւն և իրագործումն է գտնում ականջի մասին զարթեցուած խնդիրը մանկավարժութեան մէջ եւրոպական ուսումնարաններում. ուստի և անհրաժեշտ է, այս խնդրի վերայ ուշք դարձնեն նաև մեր Հայ ուսումնարաններում ուսուցչական պաշտօն ստանձնող անձերը, որոնք, շատ անգամ իրենց դասատուութեան անյաջողութիւնը վերագրում են աշակերտի ծուլութեան և բթամտութեան և իրենց յոյսը կտրում են աշակերտի վերաբերմամբ ասելով՝ „նա մարդ դառնալու չէ և այլն", որով յուսահատեցնում են թէ աշակերտին և թէ ծնողներին, որոնք իրենց որդկերանց հանելով ուսումնարանից զբաղեցնում են զանազան անպէտ գործերով, նայելով այնուհետև նրա վերայ, որպէս մի յիմարի և բթամտի վերայ: Այն ինչ, եթէ մեր յարգելի ուսուցիչները, փոքր 'ի շատէ այս խնդրի հետ, ականջի մասին, ծանօթացած լինէին, չը պիտի այնպիսի անհեթեթ սխալներ գործէին, դառնալով բազմաթիւ անհատների, հետևաբար և սերունդների թշուառութեան պատճառ:

Յօդուածի հեղինակն ասում է՝ „այժմս եւրոպական ուսումնարաններում ուսումնարանական առողջապահութեան մէջ շատ մեծ ուշք են դարձրած աչքի մասին, մինչդեռ ականջը առանց ուշադրութեան է մնացած: Այս՝ շատ հասարակ փաստերի վերայ հիմնուած է, որ ուսումնարանը իրեն վերայ շատ քիչ պատասխանատուութիւն է առնում լսելիքի վնասուելու քան թէ աչքի վերաբերմամբ, այն ինչ ստատիստիկական (վիճակագրական)

տեղեկութիւնները շատ պարզ ցոյց են տալիս, որ ինչպէս կարճատեսութիւնը, նոյնպէս թոյլ լսողութիւնը բարձր դասարանի աշակերտների մէջ հետզհետէ աճում է։ Ծանր լսողների տոկոսը առաւելանում է հասակին համեմատ, ինչ տեսակ կեանքի մէջ և ս գտնուին։ Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ սենեակի չափազանց տաք օդը մի կողմից և արտաքին ցուրտ օդը միւս կողմից պատճառ են լինում ականջի զանազան հիւանդութեանց յառաջանալուն, դժուար թէ կարելի լինի ասել, որ ուսումնարանը նպաստում է ծանր լսողների տոկոսը զարգանալուն։

Սակայն, ընդհակառակն, կան ուրիշ շատ յարաբերութիւններ ուսումնարանական առողջապահութեան և ականջի հիւանդութեան մէջ։

Նախ՝ ծանր-լսողութիւնը։ Դա, շատ հասկանալի է, որ մեծ արգելք է լինում մանուկների հոգեկան զարգացման համար։ Ծանրանալսողներն իրենց խլութեան պատճառով ոչ միայն վատ համարում են ստացած ուսուցիչների առաջ, այլ և աւելի են դառնում նրանց իրենց անուշադրութեան պատճառով, սակայն վերջինս չը պիտի ոչ մի կերպով նրանց բնաւորութեան վերագրել, քանի որ բնականաբար այդպէս պիտի լինէր։ Ինչպէս կարող է մէկը այն բանին ուշադիր լինել, քանի որ չէ հասկանում։ Դիցուք թէ՛ նա ինքն կամենար իր բոլոր ոյժը կեդրոնացնել, որպէս զի նրան հասած անորոշ կերպով ուսուցչի խօսքերը ինտերպրետացիոնի շնորհիւ, այն է՝ առաջին միտքը հետևողով բացատրելով ըմբռնէ, բայց այսպիսի մի խնդիր թուլակազմ մանուկներին շատ ծանր պիտի լինէր։

Կարող է արդեօք աշակերտի ինտերպրետացիոնական ձիրքը, մինչև անգամ եթէ յաջողութիւն էլ չը յառաջանայ, ուսուցչի ասած խօսքերը և իմաստները շարունակ լսել և ըմբռնել։ Մանուկը շատ շուտ նկատում է իր աշխատանքի ունայն լինելը։ Նա նեղանում և տխրում է երբ իր ականջին հասած բառերը պարզ և մէկին չեն. նա ի զուր իր ուշքն ու միտքը դարձնում է այդ բանին, որպէս զի ուսուցչի և ծնողների նախատինքից ազատ լինի։

Որքան շատ՝ փոքրիկ արարածը իրեն հարկադրում է մի բան լսելու, այնքան աւելի անընդունակ է դառնում ուսումնարանի պահանջներին համապատասխանելու։ Ահա այդպէս, նրա ջղերի չափազանց լարումն, տհաճութեան և անբաւականութեան զգացումը, նրա ուժերի սաստիկ ձգտումն ներգործում են ականջի հիւանդութեան վերայ։ Եւ վերջապէս ծանր դէպքերում վերոյիշած պատճառներն իրենց հետևանքով հանդերձ հասցնում են մանուկին խելագարութեան մելամաղձութեան, ինքնասպանութեան և այլն։ Կամ թէ ծնողները յիմարի տեղ են դնում իրենց մանուկներին հանելով նրանց ուսումնարանից և դատապարտելով իրենց ձեռքի տակը. Նրանք այնուհետև նրան մի այնպիսի արարածի տեղ են դնում, որ ընդունակ է միմիայն ամենաստորին պարապմունքների համար։ Այս բոլորի առաջը կարելի է շուտով առնել, եթէ որ ժամանակին հասկանային, որ նրանք մի ծանրալսողի հետ են գործ ունենում և ոչ թէ խակապէս իրենց կարծած յիմարի հետ։

Ես այստեղ պարապում եմ բացի ականջի և վզի հիւանդութիւններից, նաև գործնականապէս քթի հիւանդութեամբ։ Եւ որքան ես գիտեմ եմ, քթի հիւանդութիւն ունեցողները ունին նաև շատ կամ նուազ աստիճանով ականջի հիւանդութիւն։ Ինձ մօտ բերում են թէ այստեղի և թէ այլ կողմերի բժիշկների մանուկներին քթի հիւանդութեան պատճառով, որոնց նիստ ու կացից, խօսակցութիւնից, լսելուց, դէմքի արտայայտութիւնից իսկոյն կարելի է ճանաչել, որ նրանց լսելու կարողութիւնը շատ մեծ աստիճանով նուազած է։ Եթէ մինը յաճախ ականջի հիւանդութիւն ունեցողների հետ գործ է ունեցած, նա մի անգամ տեսնելուց իմանում է մինչև անգամ թէ որ կողմի ականջը ծանր է լսում. այսպիսի դէպքերում հիւանդը մարմինը թեքում է մեծ մասամբ այն կողմը, որ կողմը որ նրա լսողութիւնը թեթև է և սուր։ Որքան պիտի իմ բարեկամ բժիշկները զարմանան, երբ ես նրանց ցոյց տամ, որ քթի հիւանդութեան պատճառով ինձ մօտ բերած մանուկները շատ մեծ աստիճանով ծանր լսող են։ Որքան մեծ պիտի լինի նրանց ուրախութիւնը, երբ այդ գաղտնիքը նրանց առաջ կը բացուի, որ նրանց անընդունակ համարուած մանուկը գիտնական առարկաների մէջ, այնպէս յիմար չէ ինչպէս որ նրանք և ուսումնարանի վարչութիւնը կարծում էին։ Եթէ այդ տեսակ ծանր լսող մանուկները մենք բժիշկների մօտ ենք գտնում, ապա որչափ շատ պիտի լինի մնացած դասերի մէջ ծանր լսող մանուկների թիւը։ Այսպէս, մանուկի ծանրալսողութիւնը հասակին հետ աճում է, իսկ նրան շրջապատողներն այնպէս են ընտելացած այդ տեսակ հիւանդների հետ, որ նրանք ծիծաղելով երեսը մի կողմը կը դարձնեն, եթէ ասեն, որ նրանց մանուկը գրեթէ խուլ է։ Փոքրիկ արարածը խլութեան հետ միասին տանջվում է նաև ականջի տաղտուկով, գլխի պտոյտով, սրտի խառնուածքով, գլխացաւով և այլն, որովհետև այս տեսակ հիւանդութիւնները շատ մեծ մասամբ յառաջանում են լսելիքի գործարանի հիւանդութիւնից։ Մանուկն և ս նոյնպէս հաշիւ թէ այդ դժբաղդութեան նախազգացումն ունի, որին նա վաղուց հետէ ընտելացած լինելով, կարծում է թէ՛ այդպէս պէտք է անպատճառ լինի։

Ուսումնարանում շատ նուազ աստիճանով, այն է աշակերտի ուշադրութեան ցրուելով երևան է գալիս ծանրալսողութիւն։ Մանուկը ուսումնարանում գրեթէ ամեն բան լսում է, ինչ որ ուսուցիչը ասում է, բայց ասածը չէ կարողանում շարքով ըմբռնել։ Միայն երբ ուսուցիչը ծանր լսող մանուկին մօտենում է և բարձր ձայնով մի բան է ասում, այն ժամանակ նա կարողանում է ուսուցչի ասածը հասկանալ։ Սրա պատճառը նրանումն է կայանում, ինչպէս բժիշկները բացատրում են, որ „որպէս զի ասած խօսքերը և բառերը մեր մտքին հասնեն, բաւական չէ միայն, որ մենք հասկանանք, այլ հարկաւոր է նաև, որ մի առանձին ուժով հնչուին, ապա թէ ոչ, իւրացումն կը կատարուի մեքենաբար և մենք կարող չենք լսածները մտաւոր կերպով մշակել“։

Այդպիսի մանուկների հետ ուսուցիչը կարող է հետևեալ փորձերը անել. նա պիտի առաջարկէ մի այնպիսի հարցում, որը բոլոր մանուկների հասկացողութեան մէջ արդէն կար. յետոյ նա պիտի պահանջէ իր հարցման պատասխանը անուշադիր երևացող աշակերտից, որը յիրաւի նուազ աստիճանով ծանր լսող է։ Նոյնը շատ դէպքերում կարող չէ պատասխանելու. նրա համար այն և ս բաւական է, եթէ կարողանայ հարցման վերջին բառերը կըրկնել. այսպէս ուրեմն, նա ամեն բան մեքենաբար լսած է, և ամեն բան նրա լսողութեան կեդրոնին թոյլ և մութ կերպով է հասած։

Եթէ նուազ ընդունակ, ծանր լսող մանուկը իրեն այնպիսի դրութեան մէջ դրած է տեսնում, որ նա անպատճառ ուշադիր պիտի լինի, այն ժամանակ նա իրան շատ է հարկադրում և ուշադրութիւնը լարում, որ ասածները կարողանայ լսել և հասկանալ, ինչպէս միւս անհասները, որոնց զգայարանքները ոչ մի կերպով նուազած կամ վնասուած չեն։ Սակայն այսպիսի դրութեան մէջ մանուկը երկար չէ կարող կենալ. նա շուտով խորասուզվում է անուշադրութեան մէջ, որովհետև բառերը նրա հոգւոյ մէջ այն ուժով չեն հնչում, ինչպէս որ այս պէտք էր, որպէս զի նա կարողանար լսածը մտաւորապէս իւրացնել և ոչ մեքենաբար։ Այս շօշափում է ուղղակի այն խնդրին, թէ՛ „ուսումնարանը ծանրաբեռնում է մանուկներին չափազանց աշխատութեամբ“։ Ես այս բանի հետ չեմ կարող համաձայնել, որ առողջ զգայարանքներ ունեցող մանուկների համար այդ (ծանրաբեռնում) այն աստիճան մեծ չափով լինի, ինչպէս որ յաճախ ընդունում են։ Այսօրուայ աւարտող աշակերտների գիտութեան չափը այնքան նկատելի բարձր չէ, քան թէ առաջուայ ժամանակները։ Ընդ հակառակն, եթէ 'ի նկատի առնենք այժմեան դասատուութեան լաւացրած մեթոդները, կը տեսնենք, որ ուսման նիւթը այսօրուան օրը առաւել հեշտութեամբ են ըմբռնում, քան թէ սրանից 20—30 տարի առաջ։ Մեր այս ասածի հաստատութիւնը ամեն օր ենք գտնում։ Այն մանուկները, որոնք շատ քիչ ընդունակ են, բայց կատարեալ զգայարանքներով, իսկոյն ծիծաղելով պատասխանում են, եթէ նրանցից հարցուի թէ նրանք ծանրաբեռնուած են թէ չէ, թէ նրանք գրեթէ ոչինչ չունին տանը պատրաստելու ուսումնարանի համար։ Այն ամենը, ինչ որ նրանցից պահանջում են, նրանք սովորում են դասատուութեան միջոցին. տնային աշխատութեան մասին հազիւ թէ այստեղ խօսք լինի, որովհետև ընդամենը մի ժամ ժամանակ չէ հարկաւորվում։ Անկատար զգայարանքներ ունեցող մանուկների համար բոլորովին այլ կերպ է լինում. այդպիսի մի մանուկ, որը օրական 5—6 ժամուայ դասատուութեան մէջ, ոչինչ հասկացած չէ, ի հարկէ պէտք իրեն սովորէ տանը շատ աշխատել, որպէս զի իւր ընկերներից յետ չը մնայ։ Խակապէս ծանրաբեռնումն այս է։ Ուստի իմ կարծիքս այս է, որ եթէ բժիշկները ծնողների գանգատը լսելու լինեն ծանրաբեռնման մասին, նրանք պարտական են նախ փորձելու, թէ արդեօք նրանց մանուկները կատարեալ զգայարանքներ ունի՞ն թէ ոչ, նրանք կատարեալ լաւ լսում են, թէ ոչ։

Այն բարեկամ բժիշկները, որոնք այս խորհրդին հետևել են ուզում, պիտի զարմանան երբ իրենց քննած մանուկների մեծ մասը, որոնք առաջ առողջ էին համարուած, ծանր լսողութիւն ունին։

Եթէ որ այսպէս հաստատ է ծանր լսողութիւնը և նրա հետևանքը, սրա դէմ ճար գտնել և ս հեշտ է, այն է՝ ուսուցիչները պիտի աշխատեն որքան կարելի է այդպիսի մանուկներին իրենց սեղանի մօտ նստացնեն. բացի սրանից ցոյց տալ ականջի հիւանդութեան մասնագէտ բժիշկներին և դարմանել. և ահա այսպէս շատ կարճ միջոցում մեզ երևցած անընդունակ մանուկները կարող են կրկնել այն ամենը, ինչի մէջ որ յետ էին մնացել իրենց դասընկերներից։ Եւ ահա այդպէս, մեր կարծած ծանրաբեռնուած և մինչև այդ ժամանակ չը ճանաչուած հիւանդութեան դէմ մարտնչող երիտասարդ արարածից կը յառաջանայ մի նոր, զուարթ մարդ, որը կը համապատասխանի թէ իւր հասակին և թէ կեանքի բոլոր յարաբերութիւններին և հանգամանքներին։

Սարգիս Տէր Դարբինեանց.

1884 թ. սեպտեմբերի 26.
Լայպցիգ. (Գերմանիա).

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՋԱԼԱԼ-ՕՂԼԻ, 6 հոկտեմբերի. Թէ ինչպէս շատ անգամ տանը նստած կեղծ ճանապարհորդներ, ստախօս-ճըշմարտախօսներ, բամբասասէր-արդարասէրներ, խաղաղասէր-խառնակիչներ և կեղծաւոր հրապարակախօսներ կարողանում են մարդկանց մտքերը շփոթել, արդարը զրպարտել, գործի իսկութիւնը աղաւաղել և մամուլի վարկը ձգել, այդ մեզանում մէկ սովորական բան է դարձել։

Ձեր պատուական „Նոր-Դար“-ի 152 համարում զետեղուած էր մէկ անհեթեթ յօդուած Ջալալ-Օղլուց „ճանապարհորդ“ ստորագրութեամբ. Թէ ինչ մտքով և ինչ նպատակով էր գրուած այն յօդուածը, այդ միայն գրողը գիտէ, իսկ ես, ինչպէս գործի բոլոր իսկութեանը տեղեակ և երբեմն անդամ Ջալալ-Օղլու հասարակութեան, ինձ պարտք եմ համարում ճշմարտութիւնը յերևան հանել և հետաքրքրուող հասարակութեան սխալ կարծիքը փարատել, յուսալով, որ դուք, երբեմն անկեղծ խմբագիր, ձեր լրագրի մերձաւոր համարներից մէկում տեղի շնորհէք։

Ջալալ-Օղլու երկսեռ ուսումնարանների համար երբեմն դրամագլուխ ժողովուում է ընդամենն տասն հազար երեք հարիւր րուբլի, որից 4500 րուբ. լինում է մուրհակով և 5800 պատրաստի դրամով. պատրաստի դրամից 2000 րուբլի տալով հասարակութիւնը գնում է ուսումնարանի համար մէկ տուն իւր ընդարձակ և ծառաստանի բակով, մօտ 1000 րուբլի ծախսվում է ուսումնարանաց կահ կարասեաց և ուսումնական ու դասական պարագայից համար *), իսկ մնացածը տրվում է տոկոսով այն ժամանակ ապահով անձանց։

Ուսումնարաններն կառավարւում են դրամագլխի տոկոսով, աշակերտաց թոշակադրամով և առժամանակ մոմավաճառութիւնից գոյացած արդիւնքով։ Ուսումնարաններն երբէք չեն ունեցած հազարական րուբլիով ուսուցիչներ։ Ամենից շատ ռոճիկ ստացողն եղած է տեսչի պաշտօն կատարող ուսուցիչն 600 րուբլի տարեկանով, իսկ մնացածներն նրանից առաւել պակաս, և այդ այն տարիներում, երբ ամենահասարակ բնակարանների վարձը լինում է ոչ պակաս 10 րուբլ ամսական, նոյնպէս ամեն բան կարգից դուրս թանկ։

Ջալալ-Օղլու ուսումնարաններն իրենց չորսամեայ կանոնաւոր գոյութեան ընթացքում կարողացան պատրաստել բազմաթիւ աշակերտներ Ներսիսեան դպրոցի Ա., Բ. ու Գ. դասատանց և ճեմարանի Բ. դասատան համար, նոյնպէս և աշակերտուհիք Թիֆլիսի Ս. Գայիանեան ուսումնարանի Բ. դասատան համար, սրանից առաւել ինչ յառաջադիմութիւն է կամեցել մեր ծպտեալ ճանապարհորդը, ես չը գիտեմ. երևի նա կամեցել է, որ Ջալալ-Օղլու ուսումնարաններից ուղղակի համալսարան մտնէին։

Ջալալ-Օղլու ուսումնարաններն իրենց բացման օրից սկսեալ ունենում են իրենց սաստիկ հակառակորդներ, որոնք ամեն տեսակ ստոր միջոցներ գործ են դնում նրանց խանգարման և գործողների վարկը և պատիւը վայր ձգելու. առ այժմ աւելորդ եմ համարում մի առ մի հաշուել այն գործ դրած միջոցներն, միայն այսքանս կարող եմ ասել, որ նրանք հասնում են իրենց նպատակին և անցեալ տարի փակվում են ուսումնարաններն և նոյն վարժատանց երբեմն ուսուցիչ, ոչ թէ աժան գնանոց, ինչպէս ասում է պ. ծպտեալ ճանապարհորդն, պահպանում է մէկ մասնաւոր ուսումնարան։ Ուսումնարանները արդէն այս տարի սեպտեմբերի սկզբից Սրբազան Առաջնորդի կարգադրութեամբ բացուած են և շարունակվում են։

Այս ամառ Սրբազան Առաջնորդն Ջալալ-Օղլի եղած ժամանակ՝ հասարակութեան կողմից ընտրեալ 12 անձանց հետ միասին տեսաւ ուսումնարանների հաշիւներն և հրապարակաւ յայտնեց, որ հաշիւները ճիշդ են և ուղիղ. խարդախութիւն և աւելի ծախս չէ եղած. մեզ շատ ցանկալի էր իմանալ թէ փողոցներից լուր հաւաքող պ. ծպտեալ ճանապարհորդն որտեղից է յօրինել՝ թէ ուսումնարաններն ունեցել են տասն և ութ հազար րուբլի դրամագլուխ և թէ հոգաբարձուները վերցրել են փողերն և իրենց հին ու փտած վէքսիլներն յանձնել ուսումնարաններին։ Այս անգամ այսքանը բաւական համարելով ուսումնարանների վերաբերութեամբ, որովհետև շուտով տպագրուելու է առանձին գրքոյկով այդ ուսումնարանների պատմութիւնը, աչքի անցնենք պ. ճանապարհորդի յօդուածի միւս կէտերը։

Պ. ճանապարհորդը գրում է, որ ջալալ օղլեցիք Ջալալ-Օղլուն անուանում են փոքր Թիֆլիս. հետևում են մօդային և ծաղրում են ղարաքիլիսեցոց, որ նրանք խօսելիս հայերէնի հետ խառնում են ռուսերէն և ամենից յետոյ շատ զարմանում է, որ առևտուր չը կայ և փողի պակասութիւն է տիրում Ջալալ-Օղլի։ Ջալալ-օղլեցիք երբէք իրենց գիւղին չեն անուանում փոքր Թիֆլիս և ոչ Ղարաքիլիսան տալիս են մի որևիցէ նշանակութիւն. նրանք լաւ գիտեն, որ երկուսն էլ մէկ մէկ հասարակ գիւղեր են. ջալալ-օղլեցիք եթէ իրենց գիւղը փոքր Թիֆլիս համարէին, ղարաքիլիսեցոց պէս լրագրի էջերը միշտ յօդուածներով և թղթակցութիւններով կը լցնէին. նրանք լաւ գիտեն, որ այդ երկու գիւղի բնակիչներն հազիւ են հայթայթում իրենց սնունդը և չեն ներկայացնում առևտրական կենդրոնատեղեր. այլ ջալալ-օղլեցիք հագնվում են աւելի մաքուր և վարում են աւելի լաւ կեանք, քան թէ ղարաքիլիսեցիք, դա մօդայի հետևել չէ։ Ջալալ-օղլեցոց բարբառը իրաւ պախարակելի է, բայց նրանք երբէք չեն ծաղրում ուրիշ և մաքուր խօսողների վերայ. ես չեմ զարմանում, որ Ջալալ Օղլու առևտուրն պակաս է և փողի սակաւութիւն կայ, այդ այժմ համարեա թէ ընդհանուր է ամբողջ Կովկասի կողմերն. դա միայն կարող է զարմացնել մեր պ. ճանապարհորդին, որն, ինչպէս երևում է, հին հէքեաթների հերոսների նման մեծ քունով է քնած եղել 1879 թուականից մինչև ցայսօր և այժմ յանկարծ զարթելով և այդպիսի փոփոխութիւն տեսնելով՝ սաստիկ զարմացել է։

Վերջացնելով յօդուածս՝ ես խորհուրդ կը տայի մեր ճանապարհորդներին գրել եթէ գիտեն, գրել ինչ որ ուղիղ է, չ'աղաւաղել փաստերն, փողոցներից լուրեր հաւաքելով չ'արատաւորել որևէ բան ու նրան, չ'զրպարտել ամենեկին, սրա ու նրա հաճոյքը չը կատարել և, որ գլխաւորն է, լաւ կամ վատ հետևանքը 'ի նկատի ունենալ։ *)

Տիգրան Տէր-Դաւթեանց.

*) Աշակերտաց և աշակերտուհեաց բոլոր դասագրքերն, ուսումնական և դասական պարագայքն տրվում են ձրի ուսումնարանների հաշուով։
Ցօղ.

*) Մենք այդպիսի դէպքում կը խնդրէինք, մեզ էլ սխալ և անհիմն լուրեր չը հաղորդէին, որովհետև երկու սուտ լուրից յետոյ, երրորդ ճշմարիտն էլ սուտ կը համարուի, Խմբ.

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ, 7 հոկտեմբերի. Շատ անգամ մեր պարբերական թերթերը զբաղուեցան Հայ-կաթոլիկ համայնքի ոչ այնքան տնտեսական դրու-

թեամբ, որքան հոգևոր ներկայացուցիչների անհոգ, անտարբեր և անմխիթար վիճակով. թէև այդ վէրքը մընաց տակաւին անբուժելի, թէև յրագրական խօսքը չունեցաւ շօշափելի և արգասաւոր հետևանք, բայց և այնպէս, իբրև գիտութիւն մեր ազգային եկեղեցուն պատկանող հայ եղբայրներին, պատշաճ ենք համարում խօսել մի-երկու կարևոր կէտերի նկատմամբ։

Յայտնի է, որ մեր հոգևոր դպրոցը լինելով մի ժամանակ Ն. Շախուլեանի ձեռին մենք, հայ-կաթօլիկներս ունէինք արժանաւոր և օրինակելի քահանաներ. ժողովուրդը ապրում էր խաղաղ և անդորր վիճակի մէջ. սակայն մեր տարաբաղդութիւնից 1850-ական թուերին ինքելով իւր երկրաւորը՝ Հ. Շախուլեանին փոխարինեց կանոնիկոս Աղէքսանդր Արարատեանը. լսէ՞լ է այդ անձը, ո՞ւր և որի մօտ է ստացել իւր մտաւոր կրթութիւնը, թողում ենք մի այլ պատեհ միջոցի, իսկ առ այժմ դառնալով մեր բուն նպատակին՝ կասենք, որ Անդր-կովկասեան հայ-կաթօլիկաց հոգևոր դպրոցը ենթարկուելով Հայր Արարատեանի անմիջական իրաւասութեանը՝ տուել է մեզ մօտաւորապէս 150 քահանաներ, որոնց 10% հազիւ թէ փոքր 'ի շատէ արժանաւոր լինէր իւր սուանձնած վեհ կոչմանը. մենք խղճի մտօք և անկողմնապահութեամբ կասենք, որ այդ դպրոցը ծառայել է և ծառայում է ներկայումս Հ. Արարատեանին իբրև միջոց ապրուստի, բացառապէս իւր նիւթական շահերի համար... դառն է լսել, որ 'ի նախատինս Հայ-կաթօլիկ համայնքի, այդ բազմաթիւ քահանայի, մէջ հարբեցող, անբարոյական, տգէտ և այլն և այլն անձինք կան. գրաւ բոլորը առանց ընտրութեան —անխտիր—մուտ են գործել Հ. Արարատեանի լեցէյն (sic), նրա մօտ ուսել և նրա վկայականով Սեբաստիում քահանայացել են։

Վերջին ժամանակում երկու ուրապակիր հասակաւոր տիրացուներ, որ պատրաստւում էին գերապատիւ Հօր վկայագրով քահանայանալ. մէկը՝ իւր հարազատ քենու, կոյս աղջկայ *), իսկ միւսը հարսի պատիւը անխղճաբար բռնաբարելու աւթիւ, թէև, ժողովրդեան թելադրութեամբ, առ ժամանակ հալածուեցան Հ. Արարատեանից, սակայն այժմ չը գիտենք թէ ինչ հանգամանքից հարկադրուած, վերադարձնելով ուրարները, հայր—սուրբը պատրաստում է նրանց քահանայութեան... շնորհիւ այդ արեգայի սուքալ կրկնուող այսպիսի անպէքը մինչև յուսահատութիւն հասցրին հայ-կաթօլիկ ժողովրդին. մեզանից շատերը բողոքականութեան մէջ պտռում են իրենց հոգեկան մխիթարութիւնը, շատերը խաղաղ սառեցան կաթօլիկ եկեղեցուց, շատերը...ƒհ թողնենք. Մեթէ Հ. Արարատեանի մէջ արթնանալու է խղճի և զգացմունքի ձայնը։

Խմբագիր տէր, 'ի յուսանք, որ ազատ մտքրունքների վերայ հաստատուած պատուական „Նոր-Դար"-ը կը հիւրընկալէ մեր ներկայ ճշմարիտ և անաչառ թղթակցութիւնը։

Տիրացու Ադամ.

ՆԻԽԻ, 5 հոկ. Մեզանում հեշտութեամբ ոչ մի բարի գործ չի կարող գլուխ գալ. այդ տեսակ գործերի ձեռնարկողը միշտ հանդիպում է ամեն տեսակ խոչընդոտների. այդպիսի դէպքերում միշտ հակառակը է պոհաբեռութիւն։ Մեր խօսքը „Մանկական պարտէզի" մասին է։ Թէ ինչեր բերին խեղճ „Մալխոյի" գլխին զանազան թշնամիներ, դրա մասին աւելորդ ենք համարում գրել, քանի որ „Մանկական պարտէզը" արդէն բացուել է կանոնաւորապէս։

Ինչպէս յայտնի է ընթերցողին, „Մանկական պարտէզի" ծախքը քաշողը պ. Ս. Տէր-Սարգսեանն է, իսկ վարժուհին՝ օր. Խօջամիրեանցը։ Այս վերջինը սովորել է տիկ. Բաբայեանի մօտ և նուիրուած է այդ գործին։ Դեռ չէ անցել մի ամիս „Մանկ. պարտէզի" բացուելուց յետ, և ահա երեխաների մէջ նկատւում է բաւականին յառաջադիմութիւն։ Հաստատ կարող ենք ասել, որ „Մանկ. պարտէզին" այցելողը—բաւական չէ որ ուրախանում կամ հաւանում է, այլ և հիանում է. նրա վերայ մի խումբ երեխաների ամեն մի շարժուածքը թողնում է կատարեալ բաւականութեան տպաւորութիւն, նա շտապում է յայտնել իւր շնորհակալութիւնը վարժուհուն...Նշանակած գները ամենաչափաւոր են և ժողովրդի ամեն մի դասակարգին մատչելի, բայց, 'ի հարկէ, յետին աղքատից։ Հարուստ դասակարգից՝ 1 ր., իսկ միւսներից 50 կ։ Որքան մեզ յայտնի է, օրիորդը ղեկավարութիւն ունի մի քանի երեխաների ձրի ընդունել։ Ինչ ասել կուզի, որ դա շատ գովելի բան է։ Այս ամենը մեզ ուրախացնում է, թէև կան մի քանի հանգամանքներ, որոնք ստիպում են մեզ տրտմել, այն է, որ երեխաների թիւը շատ նուազ է (մօտ 20 հոգի, ուրեմն, վարժուհու աշխատանքը չի վարձատրւում)։ Ինչի՞ն վերագրենք այս հանգամանքը, եթէ ոչ նուխեցւոց անտարբերութեանը։ Դրանցից շատ և շատ քչերն են այցելում „Մանկական պարտէզին"։ Երեխաների թիւը կախումն ունի միմիայն այցելողների թուից։ Հաստատ համոզուած ենք, որ ամեն մի նուխեցի մէկ անգամ նայելով 'Մալխոյին' անպատճառ կ'ուղարկի այնտեղ և իւր որդուն։ Եթէ մի որ և է „փահլվան"(ըմբիշ) կամ դրա նման մի մարդ մուտք կունէ Նուխին, անշուշտ իւրաքանչիւր նուխեցի կ'պատուէ դրան իւր ներկայութեամբ, իսկ երբ դրան խորհուրդ ես տալիս տեսնել մատաղ սերնդի մի վարժարան, նա անտարբերութեամբ շուռ է տալիս երեսը։ Մեր նուխեցիներին խորհուրդ կ'տայինք այս անգամ զոհել իրենց թանկագին ժամանակից մի ժամը գոնէ „Մանկ. պարտէզին, վնաս չ'կայ, մի ժամը շատ մեծ բան չէ, ենթադրենք, թէ Քրիստոսի փոխանակ 24 ժամի, 23 ժամ են քէֆ արել... Բաւական չէ նուխեցւոց անտարբերութիւնը, զանազան սուտ-փիլիսոփաներ են ծընունդ առել Նուխում, որոնք ,,Մանկական պարտէզի'' կարևորութեան դէմ խօսելով, ուզում են իրենց կիրքը յագեցնել։

Այդ տեսակ մարդիկ, փոխանակ խեղճ ժողովրդին մոլորեցնելու, լաւ կանէին, եթէ հրապարակ դուրս գային և իրենց գաղափարները ,,Մանկ. պարտ.-"ի վերաբերութեամբ լրագրի միջոցով յայտնէին։ Դա կը լինէր թէ „տղամարդութիւն'' և թէ ազնուութիւն.

,,Մանկական պարտէզի'' օգուտները անթիւ են, մանաւանդ Նուխւոյ համար։ Մի ժողովուրդ, որ ենթարկւում է մտաւոր անշարժութեան, որ չը գիտէ, թէ ինչ է նշանակում „հասարակական կեանք" ասած բանը,—այդպիսի մի ժողովրդի մատաղ սերունդը շատ աննախանձելի վիճակի մէջ պիտի լինի։ Այդ տեսակ է Նուխւոյ ժողովուրդը։ Նուխեցիք, ծանօթ լինելով միմիայն ընտանեկան կեանքին, վարում են ամենավատ կեանք։ Ինչ պիտի տեսնէ այդպիսիների երեխան, կարող է նա արդեօք ցանկալի դաստիարակութիւնը ստանալ, կարող է արդեօք մի օտար մարդու մօտ իւր մանկական դաստղութիւնները տալ... Ո՛չ, թելադրում են մեզ երկար փորձերը։ Մի երեխայ—աշխոյժ և սրամիտ հռչակուած՝ ընտանեկան չորս պատերից դուրս բոլորովին կերպարանափոխւում է։ Նրա մէջ մեռնում է բնական շնորհքը, որովհետև նա այժմ մի ուրիշ, անծանօթ շրջանում է.—„Մանկական պարտէզ" գնալով, երեխան ընտանեկան շրջանից փոխվում է մի բոլորովին օտար շրջան։ Այդտեղ նրա համար ամեն բան նոր է, այդտեղ նրան ներկայանում է ուրիշ կեանք, և այդ նոր կեանքից մանկական ընդունակ բնութիւնը շատ բան իւրացնում է... Երեխան կարելոյն չափ ծանօթանում է և բնութեան հետ... Վերջ 'ի վերջոյ, եթէ կարելի է այսպէս ասել, մի վայրենի երեխայ կրթւում, զարգանում և լուսաւորվում է։ Երեխան վարժվում է մայրենի լեզուի մէջ։ Սա շատ կարևոր է նամանաւանդ մեր երեխաների համար, որովհետև, բաւական չէ որ մայրենի լեզուն նուխեցւոց բերնում աղաւաղած է, այլ և պարունակում է իւր մէջ բազմաթիւ օտար բառեր։ Կան այստեղ բաւականին երեխաներ, որոնք իրենց ժամանակը անց են կացնում քաղաքիս փողոցներում. և հայհոյանքների մէջ վարժվում։ Այդպիսիներին „Մանկական պարտէզը" կարող է ոչ միայն ուղղել, այլ և կերպարանափոխել...

„Մանկական պարտէզը", ուրեմն, լրացնում է ընտանեկան դաստիարակութեան թերութիւնները և միևնոյն ժամանակ պատրաստում է մի նոր կեանքի համար, այն է՝ ուսումնարանների համար, այսպիսով ուսումնարանի գործը հեշտացնում և թեթևացնում է։ Համեստութիւն, խոնարհութիւն, համբերութիւն, աշխատասիրութիւն....ահա նմանապէս երեխաների ստացած օգուտը ,,Մանկական պարտէզից''։ Թող ով ինչ ուզում է ասէ, բայց մենք զգում ենք ,,Մանկական պարտէզի'' օգուտը նուխեցիներին համար և խորհուրդ ենք տալիս դրանց գրկաբաց ընդունել այդպիսի մի ձեռնարկութիւն, որպէս զի վաղը չը պղծան և չ'ափսոսեն։

Մ.

---

*) Այդ աղջկայ հայրը 4 տարի է ահա, որ ամօթից կորել-անհետացել է. իսկ դժբաղդ ընտանիքը մնացել է պատերի տակ, նա մահանում է քաղցից... Ծանօթ. յօդ.

ՆԱՄԱԿ ԱՐՇԻՍԵԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ.

—

ՍԱՒԶԲՈՒՐ, 15 սեպտեմբերի. Այս կողմերից ոչ ոք մեր թերթերին ոչինչ չէ գրում։ Նոյն իսկ ընդհանուր լրագրութեան մէջ շատ հազիւ են պատահում Պարսկաստանի այս անկիւններին վերաբերեալ ոչ միայն թղթակցութիւններ, այլ մինչև անգամ լուրեր։ Բայց Պարսկաստանի այս անծանօթ քաղաքները արժանի են ուշադրութեան։

Ամենից առաջ ես կը խօսեմ այս կողմերի մեր հայրենակիցների մասին, որոնք լինում են Քեանարագեաղում, Շահրութում և Սաւզբարում։ Քեանարագը մի փոքրիկ նաւահանգիստ է և գտնվում է Կասպից ծովի հարաւային ափի վերայ։ Այդ նաւահանգստովն են անցնում դէպի Ռուսիա Խորասանի և Արաղստանի արդիւնաբերութիւններն, որպիսիք են բամբակ, բուրդ, լաւ, մորթ, մրգեղէն և այլն, որոնք ըստ մեծի մասին պատկանում են ռուսաստանցի վաճառականներին։ Այդ նաւահանգստից նոյնպէս փոխադրվում են Խորասանի և Արաղստանի կողմերին—Ռուսիայից եկած ապրանքները։ Այստեղ կան 6—7 հոգի ռուսահպատակ հայ գործակատարներ և յանձնառուներ (քոմիսիոներ), որոնց ձեռքով և ճանապարհվում են Ռուսիա և Պարսկաստան այդ նաւահանգստը հասած ապրանաց գրեթէ մեծ մասը։ Դրանք բոլորն էլ այն աստիճան սիրով և համերաշխութեամբ են ապրում միմեանց հետ և այնքան միաձայն են իրենց գործառնութեանց մէջ, որ գրաւել են թէ պարսից ընկերների և թէ մօտակայ ծովային ռուս օֆիցերների ուշադրութիւնը և համակրութիւնը, Այդ փոքրիկ հասարակութիւնը իւր չափազանց համերաշխ գործակատարութեամբ մեծ օգուտներ է տալիս և իւր գործատէրերին. ըստ որում թէ գնելու, թէ վաճառելու և թէ ապրանք ճանապարհելու ժամանակ հեռու է պահում իրեն մրցութիւնից, կամ ինչպէս ասում են, իրար ճգրու գործ կատարելուց։ Ի հարկէ բացառութիւնը ամեն տեղ լինում է։ Քեանարագեաղի փոքրիկ հասարակութեան մէջ էլ կայ այդպիսի բացառութիւն։ Դա մի երիտասարդ է, որ իւր վերայ դժբաղդաբար շատ մեծ համարում ունի և երբ հասարակական գործերի մասին խօսք է լինում, միշտ գեղեցիկ ցանկութիւն է ունենում առաջնորդ և ղեկավար լինելու։ Հակառակասիրութիւնը, որ չափազանց ինքնահաւանութիւնից է առաջանում, այդ պարոնի սեփականութիւնն է։ Բարեբաղդաբար մեր հակառակասէրը՝ միւսների համերաշխութիւնը քանդելու չափ ոյժ չունի. նա միայն բաւականանում է լրագրութեան մէջ իւր փառքը որոնելու սպառնալիքով։

Քեանարագեաղի տղերանց հակապատկերն են ներկայացնում Շահրութի և Սաւզբարի գործակատարներն։ Դրանցից ոմանք ագուլեցի, ոմանք ղարաբաղցի և այլք ղարադաղցիներ են։ Նրանց անմիաբանութիւնը և հակառակասիրութիւնը ճիշդ հայկական է։ Միմեանց ճգրու թանկ ապրանք գնելը և աժան վաճառելը, միմեանց յաղթելու համար թանկ քրահներով ապրանք ճանապարհելը և այսպիսով իրենց գործատէրերին վնասելը և այլ վիճարութիւնները սովորական բաներ են։ Գոնէ այնքան ինքնասիրութիւն ունենային այդ պարոնները, որ իրենց տէրերին վնասելով պարսիկների գըրպանները չը լցնէին... բայց ինչ եմ ասում. ախր էլ ի՞նչպէս իրենց հայ լինելը կապացուցանէին։ Ծիծաղելին այն է, որ միևնոյն օրը միմեանց ամեն տեսակ թշնամութիւնները անելուց յետ՝ երեկոյեան բոլորը հաւաքվում են սեղանի շուրջը և օղի բաժակները շըխկացնելով „Աստուած վկայ, ասում են, սաղ Պարսկաստանում մեզ նման սիրով ապրողներ չը կան" և ամենքը միասին հաստատում են այս ճըշմարտութիւնը, իսկ առաւօտը նորից սկսում իրենց խնտրիքանները։ Այստեղ էլ լաւութեան կողմից բացառութիւն են կազմում մի ղարաբաղցի յայտնի վաճառականի գործակատարները միայն. բայց ի հարկէ մի ծաղիկով գարուն չի լինիլ։ Միւսների պատճառած վնասից սրանց էլ է բաժին հասնում, որքան և վերջիններս հեռի պահէին իրենց խնտրիքաններից։ Ցանկալի է, որ այս կողմերում առևտուր անող վաճառականներն խիստ հրահանգներ ղրկէին իրենց գործակատարներին միմեանց հետ սիրով մնալու և համերաշխութեամբ գործելու, հակառակ դէպքում իրենք վաճառականները ստիպուած կը լինեն իրենց փոս ու փուէքն այս կողմերից հաւաքելու։

Հետևեալ նամակով կը գրեմ Սաւզբարի ընկերների գործերից ընդհանրապէս։

Անդրկասպեան.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Թիւրքիայի ֆինանսական նեղ վիճակի մասին „Stamboul"-ը գրում է 22 սեպտեմբերից. „Անցեալ կիրակի բազմաթիւ թիւրք խանութներ, որոնք բարեգործական հաստատութիւնների մինիստրութիւնից չնչին պէնսիաներ են ստանում, հաւաքուել էին այդ մինիստրութեան մինիստրի մօտ, խնդրելով, որ գոնէ իրենց հասուցանէ մի ամսուայ ռոճիկ, ըստ որում իրանք խիստ կարօտութեան մէջ են։ Դժբաղդաբար մինիստրը ստիպուած էր նրանց հաւատացնելու, որ մինիստրութեան գանձարանն էլ միևնոյն վիճակի մէջն է։ Թօշակ ստացող կանայքը այդ պատճառաբանութիւնը չ'ընդունելով, հետևեցին մինիստրին մինչև նրա կառքը և փորձեցին նրան կառք նստելը խանգարելու։ Այս խառնակութեան ժամանակ մի կին, որը իւր սարսափելի զոռումով աչքի էր ընկնում, ուշքից գնաց։ Երբ նա ուշքի եկաւ, պատմեց թէ արդէն երեք օր է, որ ոչինչ չէ կերել։ Այդ միջնադէպքից օգուտ քաղեց մինիստրը և իրեն նեղողներից փախուստ տուաւ։

—

Փարիզից, հոկտեմբերի 12-ից (նոր տոմ.) գրում են „Post„ լրագրին. „Չէ կարելի ժխտել, որ, Կուրբէյի վերջին հեռագիրներին նայելով՝ փրանսիացիների վիճակը Ֆորմօզա կղզում այնքան էլ լաւ չէ, ինչպէս սկզբումը կարծվում էր։ Ծովակալ Կուրբէն դեռևս Կելունգը չէ գրաւել, իսկ ծովակալ Լեսպէսը Նամգուէին դեռ ևս չէ տիրապետել։ Վերջին նաւահանգիստը պաշտպանուած է տորպէդներով, իսկ գլխաւորին գրաւելու փորձը, որտեղ գտնվում են այդ գործիքներ, Կուրբէյի հեռագիրներին նայելով չէ յաջողուել։ Այժմ Կուրբէն կսկսի պաշարել Տանդժուլը և Ֆորմօզայի ուրիշ շատ նաւահանգիստներ։ Այստեղ մի տեսակ տրտմութիւն է նկատվում այդ անյաջող լուրերի պատճառով։ Մամուլի մի մասը յանդիմանում է, որ Կուրբէյի պատերազմական ոյժերը չափազանց թոյլ են և դրանով էլ բացատրում են գործի դանդաղութիւնը։ Շատերը պնդում են, որ պէտք է դարձեալ օգնութիւն ուղարկել։ „Temps" իւր կիսապաշտօնական նկատողութեան մէջ հաղորդում է, որ Կոնգօյի հարցի մասին երեք տեսակ հրաւէրներ կլինեն։ Նախ ուղղակի Աֆրիկայի արևմտքով հետաքրքրուող պետութիւններին, ինչպէս Գերմանիան, Անգլիան, Պորտուգալիան, Սպանիան, Բելգիան և Միացեալ-Նահանգները։ Երկրորդ՝ Աւստրիան, Ռուսիան և Իտալիան։ Երրորդ՝ երկրորդական տէրութիւնները, ինչպէս Շվէցիան, որոնցից կը պահանջուի, որ նրանք իրենց համաձայնութիւնը տային այն վճիռներին, որոնց կ'ընդունէ կոնֆերէնցիան։ Յետոյ „Temps"-ը պատասխանում է „ Journal de Débats"-ի յայտնի յօդուածին, թէ կոնֆերէնցիան այնուամենայնիւ կը պարապի պետութիւնների հին իրաւունքների վերաքննելով, որոնք գործ են դնվում երկիրների տիրապետութեան մէջ, բայց միայն ազատ արևմտեան Աֆրիկայի երկիրները տիրապետելուց։ Այդպիսով հարցը չի կարող վերաբերուիլ ոչ Մադագասկարին, ոչ փրանսիական գաղթաբնակիչների Սենեգալում, Գաբունում և Գվինէյի ծովածոցում''։

—

„Temps"-ի վերջին համարում տըպուած է մի նկատողութիւն, որի մէջ հաղորդվում է, թէ Գերմանիան իւր վերայ է առել Բեռլինում կոնֆերէնցիայ գումարելու պարտաւորութիւնը, այն հարցերը ուսումնասիրելու նպատակով, որոնք ծագել են Աֆրիկայի արևմտեան կողմում գործերի ներկայ դրութեամբ։ Կոնֆերէնցիային կը հրաւիրուին, իբրև գլխաւոր հետաքրքրուող պետութիւններ,-Ֆրանսիան, Անգլիան, Հօլլանդիան, Բելգիան, Պորտուգալիան, Սպանիան և Միացեալ-Նահանգներ, ըստ որում, օրինական սկզբունքների

հիմանց վերայ՝ կը կարգաւորուի Աֆրիկայի այդ մասի տնտեսական և քաղաքական կացութիւնը, նոյնպէս կը վճռուին միջազգային իրաւունքներին վերաբերեալ մի քանի հարցեր, որոնք սկսել մեկնութիւնների առիթ են տալիս։ Կոնֆերէնցիա գումարելու միտքը ծագեցաւ Փարիզի և Բեռլինի կառավարութիւնների մէջ կայացած համաձայնութեան պատճառով։ Ծրագիրը, որը կազմել են Պ. Ժիւլ-Ֆէրրին և Իշխան Հօհէնլօհէն, և որը կառաջադրուի կոնֆերէնցիայի քննութեանը, ՚ի նկատի ունի բոլոր պետութիւններին ազատ իրաւունք տալ Կոնգօ և Նիգեր գետերի վերայ նաւարկելու, և պաշտպանելու այն հողերի գրաւելու իրաւունքները, որոնք դեռ ևս չեն պատկանում լուսաւորեալ պետութիւններին։

—

Սուդանի սուտ մարգարէի համախոհների պատճառով ծագած ժողովրդական շարժումը Արաբիայում օրեցօր աւելի և աւելի ծաւալումն է ստանում։ Իեմէն գաւառը ուղարկուած Թիւրքական զօրքերը արիւնահեղ պատերազմից յետոյ գրաւեցին Հեդջասում Ջիֆէր ամրոցը, որի ժամանակ Թուրքերը կորցրին մօտ երեք հարիւր մարդ։ Ապստամբներին առաջնորդող Իդրիսեան շէյխ-Ֆը գրաւեց Սարրա նահանգը և աշխատում է կտրել Թիւրքական զօրքի յարաբերութիւնը Իեմէնեան գաւառի Սաննա գլխաւոր քաղաքի հետ։ Վերջին տեղեկութիւններին նայելով՝ Թիւրքական արշաւանքի հրամանատարը պատրաստուելիս է եղել յարձակուելու ապստամբների գլխաւոր ոյժերի վերայ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հեռագրեր կտակ. „Tägliche Rundschau" լրագրի մէջ պատմում են, որ Վօջեստերում նորերումս վախճանուեց մի վաճառական-Կարլ Գաստինգս անունով, որը կտակով իւր բոլոր բաւականին նշանաւոր կարողութիւնը Թողեց Յիսուսի Քրիստոսի՝ իսկ աւելի մեծ մասը Ամենասուրբ Կոյս Մարիամի վերայ։ Այդ կտակի մէջ պարզորէն ասուած է, որ բացի յիշեալ անձինքներից, ոչ ոք երբէք չունի իրաւունք կտակած գոյքի վերայ։ Հանգուցեալը երևի կամեցել է դրանով մարդկեններին ՚ի բարեպաշտութիւն և յառաքինութիւն հրապուրել, որոնք յոյս ունենալով՝ որ այդ նշանաւոր հարստութիւնը մի օր էլ իրենց վերայ կը փոխադրուէր, կաշխատեն իւրաքանչիւրը իւր հերթում, զանազան բարեգործութիւններով և ջերմեռանդ աղօթքներով հաճոյանալ Աստուծոյ Որդուն և Նրա մօրը՝ Սուրբ Աստուածածնին։

* * *

Միսիօներ մարդակերների մէջ։ Մի վայրենի հնդկաստանցի գալիս է մի օր իւր երկու կնոջ հետ քրիստոնեայ միսիօնարի մօտ և խնդրում է, որ նա նրանց երեքին էլ մկրտէ, քրիստոնէական կրօնը ընդունելու համար։ „Այդ անկարելի է, իմ որդի, պատասխանեց եկեղեցու սպասաւորը։ Քրիստոնէական կրօնը Թոյլ չէ տալիս երկու կին ունենալը"։ Վայրենին հեռանում է առանց մի խօսք արտասանելու, և մի-երկու օրից յետոյ արդէն գալիս է իւր մի կնոջ հետ։—Այս անգամ, հայր իմ, երևի դուք չէք մերժիլ մկրտել ինձ և կնոջս։—Բայց ուր է քո միւս կինը, հարցնում է միսիօնէրը։—Նա այլ ևս չը կայ. ես նրան կերայ, պարզամտութեամբ պատասխանեց մկրտութիւն խնդրողը։

* * *

Ամերիկական խօրամանկութիւն։ Ամերիկական լրագիրներից մինի մէջ տպուած էր հետևեալ յայտարարութիւնը. „Գերազանց և աննման գիւտ։ Առանց գչի և առանց Թանաքի գրելու միջոց, որը ուղարկւում է մի դոլարով—փոստով կանխիկ ուղարկուած։ Հասցէն Ժ. Խ. կալարան Նիւ-Եօրկ, Ի. Ս." Անթիւ միամիտ մարդիկ աճապարեցին այս ու այն կողմերից ուղարկել իրենց մի-մի դոլարները, և հէնց փոստով ստացան... Ինչ. հետևեալ պատասխանը. „Գրեցէք մատիտով"։

* * *

Կանանց աշխատանքը։ Անգլիայի պետական և կառավարչական հաստատութիւնների մէջ բանում են 6,233 կին։ Գիւղատնտեսական պարապմունքների մէջ աշխատում են 32,000 կին։ Բարձրագոյն ինտելիգենցիայի դասին պատկանող 388,000 ուսնեւոր կանայք օգնում են իրենց ամուսիններին վաճառականական և արդիւնաբերական գործերի մէջ։ 1,660 հոգի զոհում են իրենց անձը միսիօներական աշխատանքի և 3,785 — վանական կեանքի, որը կապուած է հիւանդների, երեխաների և զառամեալ ծերերի վերահսկելու հետ։ Բացի սրանից՝ հիւանդանոցներում և լազարէթներում բանում են 35,175 կին։ Մանկաբարձութեամբ պարապում են 2,646 կ. Ստորին դասակարգի դպրոցներում պարապում են երկտասարդութեան կրթութեամբ 94,121, իսկ բարձրագոյն ուսումնարաններում — համալսարաններում 23,065 կ.։ Հիւրանոցներում ծառայում են 23,487, իսկ երաժշտութեան դասաւանդութեամբ պարապում են 11,376։ Ընտանեկան ծառայութեան մէջ հաշւում են մի ամբողջ գունդ՝ 1,230,606, և բաղնիսներումու լուացարաններում—269,144։ Վաճառականական գրասենեակներում բանում են 5,989, իսկ երկաթուղիների, տելեֆոնական և հեռագրական իջևաններում 6,578 հոգի։ Վերջապէս կազմարարութեամբ պարապում են 10,592. տների և զանազան շինութիւնների վերայ 1,388. երկաթէ գչի գործարաններում 10,292. ասեղի—2,074, մանկական խաղալիքների—1,233 և բրդեայ գործուածներ պատրաստելու համար աշխատում են 302,367 կին կամ երկաստիկ աւելի ձեռքեր։

* * *

Մի հին դերասան այն կարծիքն յայտնեց, Թէ միմիայն բաւականին երկայն քթով մարդիկ ընդունակ են լաւ ողբերգակ դերեր։ Ուղիղ է այդ միտքը Թէ ոչ, չը գիտենք, գրում է Նիւ-Եօրկեան Թերթը, բայց փաստ է այնուամենայնիւ, որ մի երկայն քիթ, որը մինչև օտարների գործերում ներս է մտնում, բաւականին շատ ճշմարիտ ողբերգականներ է գլուխ բերում։

* * *

Ամերիկայի Տէքսա նահանգի Ֆօրտ-Վօրթ տեղում Կլարա Դէվի անունով մի երիտասարդ և սիրուն կին, որը հազիւ Թէ հինգ շաբաթ պսակուած լինէր արսենիկ առնելով ինքն իրեն սպանեց։ Ինքնասպանութեան պատճառը—մայր դառնալու երկիւղն էր. այդ կինը մինչև ասում է եղել, որ աւելի սիրով ինքն իրեն կը սպանէ քան Թէ որդի կը բերէ։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ
„ՆՈՐ-ԴԱՐ"-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

11 Հոկտեմբերի.

Խարկով. Ժամանակաւոր ուշքի բերուած Շէնվալդը յիշեց մարդասպաններին. դրանք երկու դռնապաններն են, մէկը մտերումս դուրս գնացողը, միւսը նրա տեղ վարձուածը։

Բուլոն. Խօրատում, Լամանշ ջրանցքում, յանկարծ խոլերայ երևեցաւ. տասը հիւանդացողներից հինգը մեռան։

Օրան. Երէկ խոլերայով ինն մարդ մեռաւ։

Տուլօն. Նաւով Տօնկին կը գնան երկու նաւեր օգնութեան զօրքերով և պատերազմական պաշարով։

Լոնդոն. Այսօր բացուեցաւ պարլամենտի ժողովքների աշնանային շրջանը գահական ճառով, որը հրաւիրում է պարլամենտին, ընտրողական օրէնքի քննութիւնը, յիշեցնում է պետութիւնների հետ խաղաղ յարաբերութիւնների մասին, գովում է Գորդոնի քաջութիւնը, որին ազատելու համար արշաւանք է ուղարկվում Դոնգոլա, խոստանում է շուտափոյթ օգնութիւն Եգիպտոսին, նրա Ֆինանսական նեղութիւնների մէջ և խօսում է այն միջոցների մասին, որոնք կարող են ոտքիցել Տրանսիլվանեայի զինուորներին, որոնք գրաւել են Նեկանսկի գաղԹատեղիի հովանաւորութեան տակ գտնուող երկիրը,-յարգել վերջինի իրաւունքները։

Խմբագիր—Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

Հիւանդանոցի գիրեկտոր Դ. Վէրմիշովը այսու յայտարարում է, որ Թիֆլիսի քաղաքացիների հիմնած երԹևեկ հիւանդների համար հիւանդանոցում մտցնվում է օրապահութիւն պ. պ. բժիշկներից և մանկաբարձուհիներից

ԲԺԻՇԿՆԵՐ.

Յարութիւնեանց, — երկուշաբԹի-հինգշաբԹի և կիւրակի.

Կօրօնա,—երեքշաբԹի և շաբաԹ,

Մելիք-Փարսադանով,—չորեքշաբԹի և ուրբաԹ.

Մանկաբարձուհիներ.

Ֆիլչակով,—երեքշաբԹի.

Բաղինով,—երկուշաբԹի և ուրբաԹ,

Սաւեփանով, — չորեքշաբԹի և շաբաԹ։

Լօկշ,—հինգշաբԹի և կիւրակի,

Հիւանդանոցի գիրեկտոր՝ Կօլլեժսկի Սովէտնիկ Վերմիշով.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մողնւոյ եկեղեցւոյ մօտ ԵՐԿՈՒ ՓՈՔՐ ՏՆԵՐ համարաւ 3 և 5 տրվում են վարձու, այն պայմանաւ, որ „նրանց" նորոգութիւնն և կարկատանքն յանձն առնի վարձողն։ Դիմել Երէցփոխանին Մողնւոյ սբ. Գէորգ եկեղեցւոյ Թիֆլիսում։

3—1

Կովկասեան գրավաճառանոցի Զ. Գրիգորեանցի հրատարակութեամբ

Լոյս տեսաւ

ԸՆԴՀԱՆՈՒՐ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

ԴԱՍԱԳԻՐՔ

Հայոց դպրոցների համար

Մասն ուսումնական և բնական (առաջին շրջան)

40 պատկերներով

Գինն է 60 կոպ.

Աշխատասիրեց Ալէք. Սիմէօնեանց

2—1

Une dame françaice

désire donner des leçont par heures ou demi journée. Prix modérés. Sadresser chez madame Louis, charcutière, place d'Erivan. 2—1.

Հալաբարցի ԳԷՈՐԳ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ԴԱԻԹԵԱՆՑ 40 տարեկան, երկրորդ պսակից 10 ամիս վերջը գնաց ԱՐԶՐՈՒՄ. ահա ութ տարին լրանում է, որ ոչ մի տեղեկութիւն չէ ստացել խղճալի ամուսինը, ուստի խնդրում ենք ընթերցողներից վերը յիշածի մասին, ով ինչ տեղեկութիւն որ գիտէ, ՚ի սէր Ազգի, Թող նամակաւ յայտնէ խմբագրութեան։ 4—3

ԻԻՂ ԵՒ ՓՈՇԻ

ՊՂՆՁԵԱՅ ԻՐԵՂԷՆՆԵՐ ՄԱՔՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

Հաստատապէս հաւատախացնելով, որ այս միջոցը գերազանցում է բոլոր նոյն անունով միւս տեսակները, մենք, սակայն, նկատել էինք, որ նա մի քանի ժամանակից ՚ի վեր յաճախ սկսել էր փոխարինուել ուրիշով, որ փոքր ՚ի շատէ նմանում էր նրան, որը մեր կարծիքով ունի իւր պատճառը և կայանում է նրանում, որ ուրիշ վաճառողները չիմանալով յիշեալ փոշին հետ արհեստական կերպով չեն խառնում վէէննական բաղադրութիւնը, այլ հանգցնվում է խոնաւ օդի մէջ, որով Թէ և բաղադրութիւնը խիկալէս միաւորվում է փոշին հետ, բայց մի և նոյն ժամանակ կորցնում է իւր իսկական զօրութիւնը։ Այդ պատճառով մենք խորհուրդ ենք տալիս, չը դիմել ուրիշ միջոցների՝ տնային պղնձեայ ամեն տեսակ անօԹեղէններ մաքրելու համար, այլ ՈՒՂՂԱԿԻ ԱՄԵՆ ՏԵՂ ՊԱՀԱՆՋԵԼ ՓՈՇԻ և ԻԻՂ ՄԵՐ ՖԻՐՄԱՅԻ ՆԵՐԵԼԻԿՈՎ և կանխօրէք հաւաստացած ենք, որ մեր խորհուրդը օգտաւէտ կլինի։

Նաշանգներում, բոլոր դեղավաճառանոցներում և կօլօնիալ խանութներում։

(Ա. 8) 5—2

„ՌԱՖԱՆԻՍՏՐՕԼ" պատրաստութիւնը և վաճառումը իբրև մի միջոցի որ իւր մէջ առողջութեան վնասակար նիւթ չը բովանդակող, Թոյլ է տուած ՄՈՍԿՈՒԱՅԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԻՑ առեւտուրի ընդհանուր հիմանց վերայ

ՌԱՖԱՆԻՍՏՐՕԼ

ԱՆՈՒՇԱՀՈՏ ԲՈՂԿԱԻԻՂ

արագութեամբ ոչնչացնում է

սև բիծերը, ոգեւնը (չիչալը), պիսակը, խոցերը, բշտիկները, կարմիր բիծերը, արևառծերը և ուրիշ երեսի, կաշիի և մարմնի վերայ երևացող հիւանդութիւններ, ազատում է Թարշամած երեսից կնճիռները և կաշին սպիտակցնում, Թարմացնում, քնքշացնում և Թափանցիկ է դարձնում, տալով նրան ամենալաւ մաքուր առողջ տեսք և ոչնչացնում է ԳԷԽԻՑ ԹԵՓԸ։

ԳՈՐԾԱԾԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ. Առաւօտը լուացուելուց առաջ կաշին քսում են ՌԱՖԱՆԻՍՏՐՕԼՈՎ և վերջը լուանում են 1/4 ժամից յետոյ սապօնով. օրը 2—3 անգամ կլինում են։

Ծախվում է և ՌԱՖԱՆԻՍՏՐՕԼ-ԲԵՆԶՕՆԻ ՍԱՊՕՆ միևնոյն նպատակով, գինը 25 կոպ. կտորի համար։

ՖԼԱԿՕՆԻ ԳԻՆՆ Է 1 ր. 25 կոպ.

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏԸ ԵՒ ԾԱԽԸ. Մոսկվա, Սորտասնի բուլվար, Ալէքսէևի տուն, ՋԱՆԱԶԱՆ ԽԻԼԵՐԻ ԵՒ ՈՒՐԻՇ ԴԵՂԵՐԻ ՅԱՅՏՆԻ ՀՆԱՐՈՂ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽՎԱՆՈՎԻՉ ԽՎԱՆՈՎԻ ԽԱՆՈՒԹ, նոյնպէս կարելի է ստանալ ռուսաց կայսերութեան բոլոր դեղավաճառանոցներում և այն բոլոր խանութներում, ուր ծախվում է Ա. Ի. Իվանովի իւղը։

1 և 2 սրուակներ ուղարկելու համար՝ վճարում են 50 կոպ.։ Իսկ գլխաւոր պահեստից 6 սրուակ պահանջողներն ճանապարհի ծախք չեն վճարում։ Քանակութեամբ գնողներին լինում է սովորական զիջումն։

ԶԳՈՒՇԱՆԱԼ ԿԵՂԾՈՒՄԻՑ

(Ա. 11.) 25—8.

ԱՂԲԻՒՐ

Լոյս տեսաւ № 10 (Հոկտեմբեր) և ուղարկուեց բոլոր բաժանորդներին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 10

Ոսկու աղբիւր (Ոտանաւոր)........ Սրբուհի
Հոկայ մրջիւն (Շարունակութիւն և վերջ)... Տ. Փիւզալեանց
Ֆրիդոլին (Հայնէից բանաստեղծութիւն)... Րաֆֆի
Փրիդոլին (Շարունակութիւն և վերջ)..... Րաֆֆի

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

Կենդանիների լեզուն. Փոխադր....... Լեւոն Մ.—Ս.

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ.

Այս տարուայ անձրևային լինելու պատճառը.
Զարժ Դարվինի հետախուզութիւնը մարդուս շրջանաձև Թափառելու մասին։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Զարթուցիչ.
Մի լաւ դաս.

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Հանելուկներ (7 հատ)
Թուաբանական խնդիր։
Թուագրիծ։
Անեկդոտ։
Երգ նոտաներով (Երբոր լեզուս բացուեցաւ)։
Նախընթաց № № 8—8-ի մէջ եղած հանելուկների բացատրութիւն